ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՂԱՎՆԱՏԱՆ Ղ. ԱԲԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Արմավիրի մարզ գ. Աղավնատուն

Հեռ. (093) 14 – 67 – 00

« 16 » « Ապրիլի » 2024 թ.

N 33

aavetisyan53@mail.ru

ՀՀ Արմավիրի մարզպետ
Դ. Խուդաթյանին

Հարգելի՛ պարոն Խուդաթյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ ՀՀ Արմավիրի մարզի «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական հաստատությունում առկա է ուսուցչի թափուր տեղ հետևյալ առարկաներից՝

Ինֆորմատիկա - 10 դասաժամ
Կերպարվեստ - 4 դասաժամ
Տեխնոլոգիա - 4 դասաժամ
Ֆիզկուլտուրա - 11 դասաժամ

Կից ներկայացվում է ուսուցչի թափուր տեղերը համալրելու համար մրցություններ անցկացնելու մասին հայտարարության տեքստը:

Հարգանքներով Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցի

Տնօրեն /Մ. Զոհրաբյան/

Մրցույթ՝ Արմավիրի մարզի «Աղավնատան Ղ. Աբգարայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ինֆորմատիկա (10 դասաժամ), Տեխնոլոգիա տղաների խումբ (4 դասաժամ), Կերպարվեստ (4 դասաժամ), ֆիզկուլտուրա (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի ապրիլի 16-ից մինչև 2024թ-ի մայիսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթները տեղի կունենան 2024 թ. մայիսի 6-ին՝ ժամը 14:00-ին, Արմավիրի մարզի Աղավնատան Ղ. Աբգարայանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝Արմավիրի մարզ գ. Աղավնատուն Շահումյան փողոց 1: Տեղեկությունների համար զանգահարել 093-14-67-00 հեռախոսահամարով: